



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 16-Ա

**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արջուտ համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 27-ի նիստի օրակարգը՝

1, Արջուտ համայնքի 2019 թվականի գույքագրման փաստաթղթերում փոփոխություն կատարելու մասին:

2, Արջուտ համայնքի հողամասի վարձակալության տրամադրման մասին:

Կողմ -3

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՏԻԳՐ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՋԳԵՆ

ՎԱՋԳ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՍԱԹԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 17-Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 14,03,1997թ-ի «Համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» թիվ 51 որոշումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018 թվականին Արջուտի համայնքապետարանը դիմել է Հայաստանի Հանրապետության գույքի կառավարման կոմիտեին, «Վեոյա ջուր» ՓԲԸ-ին, ՀՀ «Զրմուղ կոյուղի» կազմակերպությանը, ՀՀ սնանկ հիմնարկների կառավարչին, ՀՀ կադաստրի կոմիտեին՝ խողովակաշարի պատկանելության վերաբերյալ, որոնցից բոլորից ստացվել է բացասական պատասխան՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Արջուտ համայնքի 2019թ-ի գույքագրման փաստաթղթերում կատարել փոփոխություն և ցանկում ներառել հետևյալ գույքը՝

Համայնքի տարածքում գտնվող ոռոգման ցանցի մաս կազմող 1 կմ երկարությամբ, 320 մմ տրամաչափի մետաղյա խողովակաշար՝ «Մար-Մոս» ՍՊԸ-ի կողմից տրված գույքի գնահատման եզրակացության արժեքով: Վերոնշյալ ցանցը 70-ական թվականներից մինչ օրս օգտագործվել է համայնքի կողմից:

Կողմ -3

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Տիգրան

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱԶԳԵՆ

Վազգեն

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

Սատենիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ՝

Պապուկյան



ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 18-Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ղեկավարի առաջարկած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության պայմանները՝

Լոտ 1 - 06-019-0105-0017 ծածկագրից, 0,11294 հա ջրային հողատեսք, մեկնարկային գինը՝ 3000 դրամ:

Մասնակցության վճարը՝ 1000 դրամ, նախավճարը և քայլերի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոս:

Կողմ -3

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ *ՏԻԳ*
 ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱԶԳԵՆ *ՎԱԶ*
 ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ *ՍԱԹ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

